А. П. КАЖДАН, *Византийская культура* (X—XII вв.), Издательство „Наука", Москва, 1968, 232 էջ, 28 նկար։

Հայ ժողովրդի միջնադարյան պատմությունը սերտորեն առնչվել է Բյուզանդական կայսրության հետ։ Բյուզանդական կայսրության մեջ չի եղել որևէ մի ազգային տարր, որ հույներից հետո խաղացած լինի այնքան մեծ դեր, ինչքան հայերը։ Այդ իսկ պատճառով Բյուզանդական կայսրության պատմությանը նվիրված ամեն մի ուսումնասիրություն՝ այս կամ այն չափով հետաքրքրություն է ներկայացնում հայ ժողովրդի պատմության համար։

Ա. Պ. Կաժդանը ընդհանուր ճանաչում գտած սովետական բյուզանդագետ է։ Նա ունի բազմաթիվ արժեքավոր դիտական մենագրություններ՝ նվիրված Բյուզանդիայի պատմությանը[1], բազմաթիվ գիտա-հանրամատչելի ուսումնասիրություններ, մեծ թվով դիտական հոդվածներ, լույս տեսած հիմնականում «Византийский временник» հանդեսում, ինչպես և այլ պարբերականներում։ Վերջերս նա մեր հանրապետական մամուլում հանդես եկավ մի քանի հոդվածներով, նվիրված հայ-բյուզանդական հարաբերություններին[2]։

«Բյուզանդական մշակույթ»-ի տակ հեղինակը նկատի ունի տվյալ հասարակության ողջ ստեղծագործական գործունեությունը. նյութական բարիքների արտադրությունից սկսած, մինչև առասպելաբանությունն ու գեղարվեստական իդեալները։ Հեղինակն իր առջև նպատակ է դրել կառուցել բյուզանդական հասարակության մոդելը գործող վիճակում, գլխավորապես X—XII դդ., այն ժամանակաշրջանում, երբ բյուզանդական հասարակությունը հասավ իր դասական ձևերին, և բնականոն զարգացման դեպքում պետք է թևակոխեր Վերածննդի ժամանակաշրջանը, մի բան, սակայն, որ ներքին և արտաքին անբարենպաստ պայմանների բերմամբ, դժբախտաբար, տեղի չունեցավ։

«Բյուզանդական» պետություն, այդ անվան տակ, երբեք գոյություն չի ունեցել, հույներն իրենց պետությունն անվանում էին «Հռոմայեցիների (իմա՛ հռոմների) կայսրություն»։ «Բյուզանդիա» տերմինը կյանքի կոչեցին հումանիստները, կայսրության անկումից հետո, նրա մայրաքաղաք Կոստանդնուպոլսի նախկին անվան՝ Բյուզանդիոնի հետևությամբ։

Դրքի առաջին գլխում, որ վերնագրված է «Աշխարհի յուրացումը», խոսվում է բյուզանդացու աշխարհիկ կյանքի մասին, սկսած երկրագործությունից, անասնապահությունից, արհեստագործությունից ու առևտրից, մինչև հաղորդակցության ճանապարհները, բնակարանների ձևերը և հագուստը։ Հեղինակը դալիս է այն եզրակացության, որ բյուզանդական տնտեսությունը հիմնված էր մանր արտադրության վրա։ Արհեստավորները հիմնականում աշխատում էին շուկայի համար, գյուղացիները նույնպես իրենց ավելցուկները շուկա էին հանում, թեև տնտեսական «ինքնաբավարարման» ձգտումը հատուկ էր, ինչպես արևմտյան ժամանակակիցներին, նաև բյուզանդացիների համար։ Բյուզանդական արտաքին առևտուրը շեշտը դնում էր առավելապես ներմուծման վրա, քան արտահանման։ Բյուզանդական տնտեսությունը խարսխված էր դրամական հիմքի վրա, թեև նատուրալ բնույթը լայն տարածում ուներ։ Դրամաշրջանառությունը XII դ. լայն տարածում է գտնում նաև գյուղում։

Երկրորդ գլուխը վերնագրված է «Սոցիալական կապերը»։ Այս գլխում խոսվում է նախ և առաջ բյուզանդական հասարակության հիմնական բջիջի՝ ընտանիքի մասին։ Համեմատելով

---

1 «Аграрные отношения в Византии XIII—XIV вв.», Москва, 1952; «Очерки истории Византии и южных славян» (Գ. Գ. Լիտավրինի հետ), Москва, 1958; «Псамафийская хроника (в кн. Две византийские хроники X века», Москва, 1959; «Деревня и город в Византии IX—X вв.», Москва, 1960; «Происхождение христианства и его сущность", Москва, 1962; „Возникновение и сущность православия", Москва, 1968. Ա. Պ. Կաժդանը խմբագիրն է և բազում գլուխների հեղինակը վերջերս լույս տեսած „История Византии" եռահատոր կարևոր աշխատության 2-րդ հատորի։

2 «К истории византино-армянских отношений в XII в.». «Պատմա-բանասիրական հանդես», № 4, 1964, էջ 235—236; «К истории византино-кавказских связей на рубеже XI—XII вв», «Պատմա-բանասիրական հանդես», № 1, 1967, էջ 174—176

Հռոմեական ընտանիքի հետ, հեղինակը գտնում է, որ բյուզանդական ընտանիքն ավելի ամուր էր։ Եթե հռոմայեցին նախ և առաջ քաղաքացի էր, քաղաքային համայնքի՝ մունիցիպիումի անդամ, ապա բյուզանդացին, որի համար հասարակական կյանքը ֆիկցիա էր, ավելի էր ներփակվում ընտանիքի շրջապատում։ Այս առումով հեղինակը կանգ է առնում տարբեր հարցերի վրա, այն է՝ ամուսնության և ամուսնալուծության, ընտանիքի գույքային հարաբերությունների, կնոջ դիրքին բյուզանդական հասարակության մեջ։ Գյուղական համայնքը բավականին թույլ էր, իսկ նրա քաղաքային անալոգիան, առևտրա-արհեստավորական կազմակերպությունները համքարությունները XII դ., հավանաբար, դադարում են գոյություն ունենալուց՝ համենայն դեպս մայրաքաղաքում։ Վանքերը ենթարկվում էին պետությանը, եղբայրության անդամները, որպես կանոն, 10—20 հոգի էին, որոնք կարող էին ունենալ սեփականություն։ Անդրադառնալով բյուզանդական քաղաքին, հեղինակը Եդեսիայի օրինակով ցույց է տալիս, որ նրանք ունեին քաղաքային խորհուրդներ, որոնք, սակայն, ենթակա էին կայսերական վարչության, հարկային պաշտոնեության, կայսերական դատավարության և ռազմական գործիչներին։ Այս գլխում խոսվում է նաև կայսրության սահմաններում ապրող այլ ժողովուրդների մասին, (այդ թվում և հայերի) երկրում նրանց գրաված դիրքի, նրանց հանդեպ կայսրության վարած քաղաքականության մասին։ Խոսվում է նաև հասարակության հիերարխիայի, պրովինցիաների արիստոկրատիայի, վերջինիս և Կոստանդնուպոլսի արիստոկրատիայի միջև գնացող սուր պայքարի, և, վերջապես, աշխարհիկ իշխանությանը ենթարկված եկեղեցու և հոգևորականության մասին։ Խոսելով դպրոցի և կրթության մասին, հեղինակը ցույց է տալիս, որ Բյուզանդիայում եկեղեցին մենաշնորհյալ վիճակում չէր։ IX դարից Կոստանդնուպոլսում սկսեց գործել բարձրագույն դպրոցը, որ հիմնադրվեց հայազգի նշանավոր գործիչներ՝ պատրիարք Փոտի, կեսար Վարդասի, Լևոն Մաթեմատիկոսի և այլոց ջանքերով։ Համալսարանն ուներ երկու բաժին՝ իրավաբանական և փիլիսոփայական։ Կային մասնավոր դպրոցներ, ինչպես և հոգևոր՝ եկեղեցուն կից։

Երրորդ գլուխը վերնագրված է «Իշխանություն»։ Բյուզանդիայում երկար ժամանակ կայսեր ժառանգական իշխանություն գոյություն չուներ։ Կայսրը Բյուզանդական կայսրության ներկայացուցիչն էր, նա սուրբ էր համարվում, ուներ անսահմանափակ իրավունքներ բոլորի նկատմամբ։ Նա գերագույն դատավորն էր, օրենսդիրն ու օրենքի մարմնացումը։ Նա էր պարգևում բարձր տիտղոսները, որոնք ցմահ լինելով, ժառանգական չէին։ Այս գլխում խոսվում է նաև բյուզանդական դատական, հարկահավաքման սիստեմների, երկրի կառավարման հետ կապված հիմնարկների մասին։ Պրովինցիայի կառավարման հիմնական օղակը բանակաթեմն էր՝ զորավարի գլխավորությամբ, որի ձեռքում էր գտնվում և՛ ռազմական, և՛ վարչական իշխանությունը։ Զորավարները աշխատում էին իրենց պաշտոնը ժառանգական դարձնել։ Խոսելով բյուզանդական բանակի մասին, հեղինակը ցույց է տալիս, որ ժամանակի ընթացքում օտարերկրացի վարձկանները այնտեղ է՛լ ավելի մեծ դեր են խաղում։ Բյուզանդական կայսրության թուլությունը XI դարում և 1204 թ. աղետի պատճառը հեղինակը տեսնում է ո՛չ թե ֆեոդալական հարաբերությունների զարգացման և ֆեոդալական մասնատվածության մեջ, այլ ընդհակառակը՝ ֆեոդալական կարգերի անբավարար զարգացման մեջ։ Երկիրը տառապում էր ո՛չ թե ֆեոդալական մասնատվածությունից, այլ բյուրոկրատական կենտրոնացումից և նրա ծնունդ տված քաղաքացիական ու բարոյական անտարբերությունից, որ համակել էր լայն խավերը։

Չորրորդ գլխում («Աշխարհի կերպարը») խոսվում է բյուզանդացու աշխարհայացքի մասին, որը քրիստոնեությունն էր։ Այն պետական կրոն դարձավ IV դ., թեև հեթանոսության վերապրուկներ հանդես են գալիս նույնիսկ XII դ.։ Բյուզանդական աստվածաբանների պայքարը X—XII դդ. ուղղված էր ոչ այնքան հեթանոսական առասպելների և ծիսակատարությունների դեմ, ինչքան իսլամի և հրեականության, հատկապես քրիստոնեական աղանդների դեմ։ Ուշ Հռոմեական կայսրության մեջ ամենատարածված կրոնական ուսմունքը Արևելքից եկած մանիքեությունն էր, որի հիմքում ընկած էր անհաշտելի պայքարը Լույսի և Խավարի, ուսմունք, որ հանդես էր գալիս որպես ճնշվածների գաղափարախոսություն։ Մանիքեության հակոտնյան էր նեոպլատոնականությունը։ Քրիստոնեությունն սկզբունքորեն տարբերվում էր և՛ մանիքեական դուալիզմից, և՛ նեոպլատոնական մոնիզմից։ Հիսուսը միջնորդն էր երկրայինի և երկնայինի միջև, որովհետև նա կատարյալ աստված էր և կատարյալ մարդ։ Այստեղ հանգամանորեն խոսվում է քրիստոնեական երրորդության ուսմունքի մասին, Քրիստոսի մարդեղության և բազում այլ հարցերի մասին։ Ուղղափառ քրիստոնեական ուսմունքը իր ժամանակին սուր քննադատության ենթարկվեց տարբեր մտածողների կողմից։ Այդ առթիվ հեղինակը կանգ է առնում արիոսականության և նեստորականության, պավլիկյանության ու բոգոմիլության, ապա նաև պատկերամարտության և գաղափարական այլ հոսանքների վրա։ Այս գլխում խոսվում է նաև բյուզանդական եկեղեցու ճարտարա-

պետության, տաճարների պատկերագրության, հոգևոր արարողության, հոգևոր խորհուրդների, ապա նաև մարդու մասին բյուզանդական գիտության, մարդու և աստծո հարաբերության, աշխատանքի ու սեփականության, դիտելիքների, ազատության և անկախության վերաբերյալ նրա հայացքների, սնոտիապաշտության մասին։ Հեղինակը կանգ է առնում բյուզանդական և հռոմեական եկեղեցիների փոխհարաբերությունների և դավանաբանական պայքարի, այդ գաղափարական տարբերությունների վրա, որոնք արդյունք էին նրանց սոցիալական ստրուկտուրայի տարբերության։

Գեղարվեստական իդեալը» վերնագրով հինգերորդ գլխում խոսվում է նախ և առաջ բյուզանդական արվեստի մասին, որը ելնում էր երկրայինի՝ երկնայինի հանդեպ ունեցած հակադրությունից, երկնայինի առաջնությունից երկրայինի նկատմամբ։ Բյուզանդական արվեստի նպատակն էր ո՛չ թե երկրայինի արտացոլումը, այլ երկրայինի աստվածային աշխարհ դուրս գալը։ Արվեստի առարկա է համարվում ոչ թե անցողիկ ու փոփոխական աշխարհը, որ մատչելի է մարդու զգայարաններին, այլ աշխարհի էությունը և գաղափարը՝ հավիտենական և անփոփոխ, որ հայտնվում է միայն մտավոր հայացքին. Հակառակ դրան, բյուզանդացիները պահպանեցին անտիկ ավանդությունները, չմերժեցին մարմնականը, քանի որ վերջին հաշվով այն բյուզանդացու համար աստծո արարչություն էր համարվում։ Կարելի է ասել, որ բյուզանդական արվեստը տանում է ոչ թե դեպի մարմնի դատապարտումը, այլ մարմնայինի հաղթահարումը, հաղթահարումը առարկաների տեսանելի թաղանթի։ Հեղինակը նշում է, որ բյուզանդական արվեստը վերջին հաշվով կոչված էր ծառայելու մի նպատակի՝ մարդու փրկությանը, այդ իսկ պատճառով արվեստը իր էությամբ պետք է հոգուն օգտակար լիներ, նա ուսուցողական էր, միշտ բովանդակում էր բարոյական նպատակներ, սարբերում բարին չարից։

Քանի որ գեղարվեստական ստեղծագործության նպատակը դիտվում էր որպես գաղափարի արտահայտություն, բյուզանդական արվեստը, համենայն դեպս տեսականորեն, առաջնությունը տալիս էր բովանդակությանը և ոչ թե ձևին։ Անտիկ աշխարհը ստեղծեց ներդաշնակորեն զարգացած անհատի իդեալ, իսկ քրիստոնեությունը աշխարհում տեսավ աններդաշնակություն, անհամաչափություն, բայց միաժամանակ ուզեց հաշտեցնել աշխարհի այդ հակասականությունը, ուզեց երկնքի և երկրի միջև կամուրջ գցել։ Դրա համար բյուզանդական արվեստը ստեղծում է ոչ թե մարմնի և հոգու հարմոնիկ միասնություն, այլ նրանց հակասությունը, որտեղ հոգևորը գերիշխում է մարմնականի հանդեպ։ Այս գլխում մանրամասն խոսվում է եկեղեցու պատկերազարդման «կանոնի» մասին, որն իր արտահայտությունն է գտնում նաև մանրանկարչության մեջ։

Վերջին, վեցերորդ գլուխը վերնագրված է «Նորը ընդդեմ Հնի»։ X դ. սկսած առավել ուժեղ զարգացում է ապրում խոշոր հողատիրությունը, հզորանում են նահանգային քաղաքները և Կոստանդնուպոլսի տնտեսական մենաշնորհյալ վիճակը վերջ է գտնում։ Հանդես է գալիս հողատիրական ժառանգական նոր արիստոկրատիա, որը ձգտում է իշխանության։ Քաղաքական իրավիճակն էլ է փոփոխություններ ապրում։ Բյուզանդիան XI դ. սկսում է քաղաքական և տնտեսական ավելի սերտ կապեր հաստատել հարևանների հետ։ Բարձր զարգացման է հասնում կրթությունն ու գիտությունը։ Արդեն հանդես է գալիս հարգանք դեպի բանականությունը, փաստի ուսումնասիրությունը։ Ծնունդ է առնում բյուզանդական ռացիոնալիզմը, որի հետ միասին առաջին փորձերն են արվում գրական ստեղծագործության «դեմոկրատականացման» ուղղությամբ։ Փորձեր են արվում նաև գրականության լեզու դարձնել խոսակցական լեզուն։ Հարցականի տակ է դրվում հին բարոյականությունը։ XII դ. զարգացում է ապրում կրոնական անտարբերությունը։ Գրականության մեջ Քրիստոսի զինվորի փոխարեն արդեն հանդես է գալիս պարզապես զինվորը, հաղթող զինվորը, որ արիստոկրատի իդեալն էր համարվում։ Նախորդ դարերում գրականության հիմնական ժանրերն էին վարքագրությունները, համաշխարհային-պատմական ժամանակագրությունները և շարականները։ XI դ. հանդես է գալիս մեմուարային գրականությունը, զարգացում են ապրում աշխարհիկ պոեզիան, նամակագրական գրականությունը և սիրային նովելը։ Նորը, հասկանալի է, իր համար ճանապարհ էր հարթում հնի դեմ սուր պայքար մղելով, բայց նորը չհաղթանակեց։ Նախ և առաջ նա պարտության մատնվեց Անդրոնիկոս Ա-ի ծանր վարչակարգի շնորհիվ, ապա 1204 թ. խաչակրաց արշավանքի։ Արևմուտքից բաժանված լինելով եկեղեցական արգում, Բյուզանդիան մասնակից չդարձավ այն առաջադիմական տենդենցներին, որոնք արդեն արմատներ էին գցում Արևմուտքում։ Տնտեսապես թուլացած Բյուզանդիան ի վիճակի չեղավ դիմագրավել թուրքական հարձակմանը։ XV դ. կեսին նա դադարեց գոյություն ունենալուց։

Ինչպես սկզբում ասացինք, Ա. Պ. Կաժդանը նպատակ է դրել կառուցել բյուզանդական հասարակության մոդելը իր դործող վիճակում։ Հեղինակին այդ բանը միանգամայն հաջողվել է։ Գիրքը գրված է գիտակ, տվյալ թեմայի վրա երկար տարիներ քրտնաջան աշխատանք թա-

փած, ժամանակաշրջանը խորը ուսումնասիրության ենթարկած մասնագետի կողմից, գրված է լավ, սահուն և պատկերավոր լեզվով և ընթերցողին տալիս է լիակատար պատկերացում բյուզանդական հասարակության բոլոր բնագավառների մասին գլխավորապես X—XII դդ.։ Գիրքն ունի «Հիմնական գրականության» ցանկ, «Հատուկ անունների բառարան» և բնագրից դուրս 28 նկար։ Ներ։

Ա. Պ. Կաժդանի աշխատությունը հետաքրքրություն է ներկայացնում նաև կայսրության ներքին կյանքին և արտաքին հարաբերություններին, կայսրության ուժեղ և թույլ կողմերին վերաբերող սուրանձին հարցերի հեղինակի նոր գրվածքով և նրա տված յուրովի բացատրություններով։

Հ. Մ. ԲԱՐԹԻԿՅԱՆ